

Վիլսոնի իրավարար վճռի և Սևրի պայմանագրի վավերականության հարցի շուրջ

Անցել է արդեն 90 տարի այն պահից, երբ 1920թ. օգոստոսի 10-ն ստորագրվեց Սևրի պայմանագիրը, իսկ նույն թվականի նոյեմբերի 22-ին հրապարակվեց ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի հայ-թուրքական սահմանը հսակեցնող իրավարար վճիռը: Անկասկած այս երկու փաստաթղթերը ընդունման պահին չափազանց կարևոր նշանակություն ունեին Հայկական հարցի արդարացի լուծման համար, և ցեղասպանությունը վերապրած հայ ժողովուրդը մեծ հույսեր էր կապում այս փաստաթղթերի հետ, ակնկալելով պատմական արդարության վերականգնում և հատուցում՝ իր կրած տառապանքների ու կորուստների համար: Առաջ անցնելով նշենք, որ այդ փաստաթղթերը չեն կորցրել իրենց նշանակությունն ու արդիականությունը նաև մեր օրերում: Բնական է ուստի, որ թե նշված փաստաթղթերի ընդունումից անմիջապես հետո, և թե հետագա տասնամյակների ընթացքում՝ ընդհուպ մինչև մեր օրերը, հայ պատմագիտական ու հասարակական-քաղաքական միտքը լուրջ ուշադրության է արժանացրել դրանք: Բնականաբար, այս փաստաթղթերին տարբեր ժամանակներում, ելնելով քաղաքական իրադրությունից ու գաղափարախոսական դոգմաներից, տրվել են հակասական ու իրարամերժ գնահատականներ: Հանուն ճշմարտության պետք է նշել, որ միայն վերջերս է տրվում զույգ փաստաթղթերի միջազգային-իրավական գնահատականը, մինչդեռ, մեր խորին համոզմամբ, դրանց իրական արժեքը կայանում է հենց վերջինիս մեջ և ուրախալի է, որ այդ բացը արդեն սկսել է լրավցվել:

Միևնույն ժամանակ նշենք, որ այս հարցերին անընդհատ ուշադրություն են դարձրել նաև թուրքերը, փորձելով ներկայացնել Սևրի պայմանագիրը և Վիլսոնի իրավարար վճիռը չեզոքացնող փաստարկներ:

Սևրի պայմանագիրը, լինելով վերջինը Առաջին աշխարհամարտում հաղթանակած ու պարտված տերությունների միջև կնքված պայմանագրերի շարքում, բնականաբար, իր մեջ ներառել է այն բոլոր դրական ու առաջադիմական դրույթները, որոնք մինչ այդ տեղ էին գտել Գերմանիայի հետ կնքված Վերսալի, Ավստրիայի հետ՝ Սեն-ժերմենի, Հունգարիայի հետ՝ Տրիանոնի և Բուլղարիայի հետ՝ Նեյի պայմանագրերում: Այս իմաստով Սևրի պայմանագիրը միջազգային իրավունքի նորմերի հետագա զարգացման տեսակետից իրավամբ կարելի է համարել թվարկված պայմանագրերի շարքում ամենաառաջադիմականն ու հեղափոխականը:

Հայ պատմագիտական միտքը Սևրի պայմանագիրը հիմնականում դիտարկել է Հայաստանին ուղղակիորեն վերաբերող 88-93-րդ հոդվածների շրջանակներում,

ապահովի Հայաստանի անվտանգությունը՝ միացված տարածքներով հանդերձ, ինչը դրսևորվելու էր մանդատի ստանձման ճանապարհով: Սակայն հունիսի 1-ին ԱՄՆ-ի Սենատի կողմից Հայաստանի մանդատի ստանձնելու մերժումից հետո այդ երաշխիքը այլևս չկար: Տվյալ պարագայում Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը պետք է կամ դադարեցներ ԱՄՆ նախագահի իրավարարության գործընթացը կամ պարտավոր էր մտածել նոր երաշխիքի մասին, ինչը կարող էր դրսևորվել Սևրի պայմանագրում հատուկ երաշխիքային հոդված նախատեսելով: Ոչ ոք և ոչինչ չէր կարող խանգարել նրանց նման հոդված զետեղել պայմանագրի մեջ, խնդիրը պարզապես ցանկության մեջ էր, որը նրանք չցուցաբերեցին: Այս հանգամանքը էլ ավելի կարևոր էր, եթե հաշվի առնենք եվրոպական դիվանագիտության ավանդական դարձած խարդավանքներն ու թուրքիայում ստեղծված նոր իրավիճակը, երբ փաստացի իշխանությունը անցնում էր քեմալականների ձեռքը, որոնք հրաժարվում էին ճանաչել Թուրքիայի օրինական իշխանության կողմից ստորագրած Սևրի պայմանագիրը և հատկապես տարածքային զիջումները:

ԱՄՆ Սենատի Հայաստանի մանդատից հրաժարվելու որոշումից անկախ Վուդրո Վիլսոնի Հայաստանի սահմանի հստակեցման հարցում իրավարարի կարգավիճակի պահպանումն ուներ իր հիմնավորումները, որոնք պայմանավորված էին միջազգային արբիտրի ընտրության համար պարտագիր հանդիսացող արդարության ու անաչառության սկզբունքներով: Ելնելով այն հանգամանքներից, որ ԱՄՆ-ը չէր պատերազմել Թուրքիայի հետ և հարաբերությունների մեջ է եղել ոչ միայն Օսմանյան կայսրության պաշտոնական կառավարության, այլև թուրք ազգայնականների հետ, ԱՄՆ-ի նախագահի թեկնածությունը դիտվում էր իբրև առավել հարմար Հայաստանի և Թուրքիայի սահմանի հստակեցման արբիտրի դերում⁴: Որպես այս արբիտրաժի հիմնավորում կարելի է բերել 1920թ. հուլիսի 17-ին դաշնակից տերությունների պատասխան նոտան թուրքական պատվիրակության մայիսի 11-ի նոտային, որը ստորագրվել է Ֆրանսիայի վարչապետ Միլերանի կողմից: Պատասխան նոտայում մասնավորապես ասված է. «Թուրքական կառավարությունը չի կատարել իր ոչ թուրք հպատակներին թալանից, բռնություններից ու սպանություններից պաշտպանելու պարտականությունը: Ավելին, բազմաթիվ ապացույցները վկայում են այն մասին, որ կառավարությունն ինքն իր վրա է վերցրել ամենագազանաբարո հարձակումների ղեկավարման ու կազմակերպման պատասխանատվությունը այն բնակչության նկատմամբ, որին պետք է պաշտպանություն ցուցաբերեր: Այդ իսկ

⁴ Барсегов Ю. Геноцид армян-преступление по международному праву, М., 2000, с.181.

պատճառով դաշնակից տերությունները չեն կարող փոփոխություններ մտցնել այն դրույթներում, որոնք նախատեսում են ստեղծել անկախ Հայաստան»⁵:

Վուդրո Վիլսոնին արբիտրի դեր ստանձնելու առաջարկը դաշնակիցների Պերագույն խորհրդի կողմից արվել է 1920թ. ապրիլի 26-ին, իսկ մայիսի 17-ին ԱՄՆ-ի պետքարտուղարը Ֆրանսիայում ամերիկյան դեսպանի միջոցով դաշնակիցներին տեղեկացնում է, որ ԱՄՆ նախագահը հաձայնել է գործել որպես իրավարար⁶: Այսպիսով, արբիտրաժի գործընթացը սկսվել է մինչև Սևրի պայմանագրի կնքումը, հետևաբար արբիտրաժային որոշումը ինքնուրույն միջազգային-իրավական փաստաթուղթ է Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի, իբրև դաշնակից տերությունների Պերագույն խորհրդի անդամների մի կողմից և Վուդրո Վիլսոնի, իբրև ԱՄՆ-ի նախագահ մյուս կողմից⁷:

Հայ-թուրքական սահմանի հարցով կատարված իրավարարությունը լիովին համապատասխանել է այն ժամանակ գոյություն ունեցող միջազգային իրավական նորմերին, որոնք տեղ են գտել Հաագայի 1899թ. կոնվենցիայի 54-րդ և 1907թ. կոնվենցիայի 81-րդ հոդվածներում՝ «եթե իրավարար վճիռը կայացել է ըստ կարգի և դրա մասին իրազեկ են պահվել կողմերի գործակալները, ապա խնդրո առարկա վեճը լուծվում է մեկընդմիջտ և ենթակա չէ բեկանման»⁸: Ակնհայտ է, որ տվյալ պարագայում որևէ պայմանագրի, տվյալ դեպքում Սևրի, ստորագրված կամ վավերացված լինել-չլինելը չի կարող ազդել իրավարար վճռի վրա:

Արբիտրաժի ոգու համաձայն արբիտրի որոշումը կողմերը ընդունում են իբրև պարտադիր, և, բնականաբար, այն վավերացման ենթակա չէ: Արբիտրաժային որոշումը առաջացնում է համապատասխան իրավական հետևանքներ նրա մասնակիցների համար: Դիմելով արբիտրաժի, կողմերը համաձայնվել են, որ արբիտրի որոշումը, որը վերաբերում է իրենց, կլինի վերջնական և, համապատասխանաբար, պարտավորվել են հարգել այն: Այդ իսկ պատճառով ԱՄՆ-ում բազմիցս նշվել է, որ Սևրի պայմանագրից հրաժարումը չի կարող ազդել կայացրած արբիտրաժային որոշման վրա⁹:

Թուրքական վարկածի համաձայն Վիլսոնի իրավարար վճռի հիմքը կազմում է չվավերացված Սևրի պայմանագիրը, ուստի դրանից ելնելով էլ այդ իրավարար վճիռը չունի իրավական ուժ: Պատասխանելով այս տեսակետին նշենք, որ Վիլսոնի

⁵ Там же, с.183.

⁶ ä³äÕ³Ý ². Ð³Óáó ä³Ñ³Ýç³İç³ñáóÃÕ³Ý ÑÇÕÝ³ËÝ¹Ç³ñÝ»ñÝ áó Ñ»é³Ý³ñÝ»ñÁ, չԳ 73:

⁷ Барсегов Ю. Геноцид армян-преступление по международному праву, с.182.

⁸ ä³äÕ³Ý ². Ð³Óáó ä³Ñ³Ýç³İç³ñáóÃÕ³Ý ÑÇÕÝ³ËÝ¹Ç³ñÝ»ñÝ áó Ñ»é³Ý³ñÝ»ñÁ, չԳ 75:

⁹ Барсегов Ю. Геноцид армян-преступление по международному праву, с.182.

արբիտրաժային որոշումը կապ ունի Սևրի պայմանագրի հետ այնքանով, որքանով, որ վերջինս 89-րդ հոդվածով ԱՄՆ-ը նախագահին արբիտրի դեր ստանձնելու խնդրանքով նախկինում դիմած Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդի չորս տերություններին՝ Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային, Իտալիային և Ճապոնիային, որոնք Սևրի պայմանագրում նշված են իբրև Գլխավոր դաշնակից տերություններ, միացել էին տասը նոր երկրներ՝ Բելգիան, Հունաստանը, Հեջասը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբա-խորվաթա-Սլովենական պետությունը, Չեխոսլովակիան և վեճի կողմ հանդիսացող՝ Հայաստանը և Թուրքիան¹⁰: Այսպիսով, Սևրի պայմանագիրը իրավարար վճռի համար ընդամենը հանդիսանում է լրացուցիչ կոլեկտիվ հայտ ի հավելումն նախորդի՝ ուղղված միջազգային իրավարար հանդիսացող ԱՄՆ նախագահին, սակայն անկախ դրանից իրավարարության գործընթացը արդեն իսկ գտնվում էր ընթացքի մեջ: Ավելին, հենց Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածի համաձայն անդամ պետությունները իրավարար վճռի ընդունումը չեն պայմանավորել որևէ հանգամանքով, այլ պարտավորվել են վճիռն ընդունել անմիջապես, իսկ վեճի կողմ հանդիսացող Թուրքիան 90-րդ հոդվածով լրացուցիչ կերպով վերահաստատել է այս դիրքորոշումը, հրաժարվելով փոխանցվելիք տարածքների նկատմամբ իր իրավունքներից¹¹:

Անդրադառնալով Սևրի պայմանագրի մեզ համար հետաքրքրություն ներկայացնող այլ հոդվածներին, պետք է նշենք, որ նրանում տեղ են գտել նաև ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման հոդվածներ: Դեռ մինչև Սևրի պայմանագրի կնքումը 1917թ. դեկտեմբերի 23-ին Լլոյդ Ջորջը, իսկ 1918թ. հունվարի 8-ին Վուդրո Վիլսոնը Թուրքիայի իրավունքները ճանաչում էին միայն նախկին Օսմանյան կայսրության այն մասերի վրա, որոնք բնակեցված էին թուրքերով՝ այսինքն միայն Անատոլիայում, այլ ազգություններով բնակեցված տարածքները պետք է ազատագրվեին նրա տիրապետությունից¹²: Իսկապես դժվար է պատկերացնել մի երկիր, որտեղ լինեին այդքան շատ ճնշված և ստրկացված ազգություններ, որքան Թուրքիայում, ուստի պատերազմի ավարտից հետո ազգերի ինքնորոշման իրավունքը պետք է գործադրվեր առաջին հերթին հենց Թուրքիայում: Հայ ժողովրդի հետ կապված ինքնորոշման իրավունքի իրացումը պետք է կատարվեր Թուրքիային քաղաքական պատասխանատվության ենթարկելու ճանապարհով՝ նրան հայկական տարածքների վրա իր սուվերենությունը տարածելուց զրկելով, ինչի

¹⁰ ԹՅՍԵՐՅԱ ՍՇՇ³/₂.ՅՍՇԿ 1ՇյՅ³.ՇյáðĀՍՅ... , չՇ 673:

¹¹ ԹՅՍԵՐՅԱ ՍՇՇ³/₂.ՅՍՇԿ 1ՇյՅ³.ՇյáðĀՍՅ... , չՇ 676:

¹² 21áYó Ü. ԹՅՍԻՅՅ ՆճոՇ ԷáđİՍՅ ԲáđոՇ, չՇ 78:

արդյունքում արդեն գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությանը միացվելու էր պատմական հայրենիքի որոշ մասը:

Ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառման առումով հենց Սևրի պայմանագրում առաջին անգամ միջազգային մակարդակով բարձրացվեց նաև քրդական հարցը, նախատեսվում էր ստեղծել առանձին պետություն՝ Քուրդիստան: Այս իմաստով Ադոնցը հիմնավորված ձևով մտահոգվում էր այն փաստով, որ Դերսիմի և Խարբերդի սանջակները, որոնք իրականում և աշխարհագրական և էթնիկ առումներով կազմում էին Հայկական բարձրավանդակի անբաժան մասը, վերապահվում էին Քուրդիստանին¹³: Այսպիսով, ապագա քրդական պետությունը ստեղծվում էր մասամբ նաև հայկական տարածքների հաշվին: Նման որոշման հիմք Ադոնցը տեսնում էր դեռևս պատերազմի ընթացքում 1916թ. կնքված ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագիրը, որին նախորդել էր Սայքս-Պիկոյի անգլո-ֆրանսիական գաղտնի համաձայնությունը, որոնցով Արևմտյան Հայաստանը մասնատվում էր ճիշտ և ճիշտ Խարբերդի գծի երկայնքով¹⁴: Տվյալ պարագայում հակակշիռ պետության բացակայության պայմաններում հայկական պատվիրակություններին չէր մնում ոչինչ, քան համակերպվել ոչ միայն այդ հատվածի, այլև Կիլիկիայի կորստի հետ, մխիթարվելով նրանով, որ պատմական հայրենիքի մի զգալի հատված միացվում էր Հայաստանին:

Ի դեպ, քրդական հարցը, Քուրդիստանի ստեղծումը և հայ-քրդական հարաբերությունների հետ կապված խնդիրները խիստ արդիական են նաև մեր օրերում: Ներկայումս ընթացող աշխարհաքաղաքական գործընթացների պայմաններում, երբ կրկին ազդեցիկ տերությունները սկսում են օգտագործել քրդական խաղաքարտը, բոլորը հասկանում են, որ միջազգային իրավունքի տեսակետից Սևրի պայմանագիրը միակ փաստաթուղթն է, որը պետականության հիմքեր է նախատեսել քրդերի համար: Այս տեսակետից նույնպես հնարավոր է համարվում Սևրի պայմանագրի վերակենդանացումը, ինչը անխուսափելիորեն հանգեցնելու է հայ-քրդական հարաբերությունների և, մասնավորապես, տարածքների ու սահմանների հստակեցմանը: Անշուշտ կարելի է միանալ Ադոնցի վրդովմունքին, որ որոշ հայկական տարածքներ Սևրի պայմանագրով նախատեսվում էր հանձնել քրդերին, որոնք անմիջական մասնակցություն էին ունեցել Հայոց ցեղասպանության իրականացման գործում, սակայն կարծում ենք, որ հնարավոր բարդություններից խուսափուլու նպատակով

¹³ Սեփարդյան Սեփարդյան, շ. 19:

¹⁴ Չեփարդյան Սեփարդյան Սեփարդյան, շ. 19:

կորդների դատական համակարգին, միանգամայն իրավացիորեն կասկածելով, որ նման դատավարությունները վեր են ածվելու իսկական ֆարսի: Այս հողվածի տրամաբանությունը թերևս բխում էր Թուրքիայում կազմակերպված երիտթուրք պարագլուխների դատավարությունից, որոնցից հիմնականներին հաջողվեց խուսափել «թուրքական արդարադատությունից»:

Այնուհետև հողված 226-ում խոսվում էր պատերազմական հանցագործներին հանձնելու մասին. «Օսմանյան կառավարությունը պարտավորվում է հանձնել դաշնակից տերություններին, կամ նրանցից որևէ մեկին, որը կդիմի նրան այդ պահանջով, բոլոր այն անձանց, ովքեր կմեղադրվեն պատերազմական սովորույթներին և օրենքներին հակասող որևէ արարք գործելու մեջ, կմատնանշվեն անվանաբար, թե ըստ աստիճանի, կատարած պարտականության կամ զբաղեցրած պաշտոնի, որոնք շնորհվել են այդ անձանց օսմանյան իշխանությունների կողմից»¹⁸:

Սակայն հանուն ճշմարտության պետք է նշել, որ դաշնակից տերությունները հետևողական չգտնվեցին նաև այս հողվածի դրույթները կատարելու գործում:

«Հողված 228. Օսմանյան կառավարությունը պարտավորվում է մեղսագրվող փաստերին լրիվ ծանոթանալու նպատակով դատաքննությունն ապահովել ցանկացած բնույթի փաստաթղթերով և տեղեկություններով՝ մեղավորներին որոնելու և պատասխանատվությունների չափը ճշգրիտ որոշելու համար»¹⁹:

Սևրի դաշնագիրը հիմք էր ստեղծում օսմանյան պետության կողմից իր հպատակ այլ քաղաքացիների դեմ գործած ոճիրների դատական հետապնդման համար: Սակայն այն շարադրվել է այն ժամանակ, երբ 1918-1919թթ., անգլիացիները ձախողվեցին օսմանյան կառավարությունից այնպիսի փաստաթղթեր և տեղեկություններ ստանալու հարցում, որոնք նրանց հնարավորություն կտային դատական գործեր հարուցել ենթադրյալ մարդասպանների դեմ²⁰:

Ստեղծված իրավիճակում Թուրքիան շտապ սկսեց երիտթուրք պարագլուխների սեփական դատավարությունը, քանզի մտավախություն կար, որ հետագայում կարող էր ստեղծվել միջազգային տրիբունալ, որի մասին շատ էր խոսվում պատերազմի ավարտից հետո, որը պետք է դատեր պատերազմական հանցագործներին: Այդ տրիբունալում ակնհայտ կդառնար Օսմանյան կայսրության դերակատարունը

¹⁸ ἰ»ñÝáÝ Æ., ²Ýá³íÁ»ÉÇáðÁÕáðÝ, ἰñ»Á " ÁĒἰáðÕ. Ð³Ûἰ³ἰ³Ý ó»Õ³èá³ÝáðÁÕáðÝÁ ÛÇç³½.³ÛÇÝ³Û³ÝÝ»ñÇ ³éç", ³ñ., 2003, չԳ10:

¹⁹ ἰ»ñÝáÝ Æ., ²Ýá³íÁ»ÉÇáðÁÕáðÝ, ἰñ»Á " ÁĒἰáðÕ, չԳ10:

²⁰ ÛáðÕÝ ἰ»ÕáðÕ, չԳ11:

հայերի զանգվածային բնաջնջման գործում, դրանից բխող հետևանքներով թուրքական պետության համար:

Սևրի պայմանագրի համաձայն թուրքական կառավարությունը ճանաչում էր դաշնակից տերությունների իրավունքը քրեական պատասխանատվության կանչել ոչ միայն այն անձանց, ովքեր մեղադրվում էին պատերազմի օրենքների և սովորույթների դեմ կատարված հանցագործությունների մեջ, այլև պարտավորվում էր նաև հանձնել դաշնակից տերություններին նրանց կողմից կոտորածների մեջ մեղադրվող անձանց, ովքեր պատերազմի ընթացքում կատարում էին հանցագործություններ այն տարածքում, որը 1914թ. օգոստոսի 1-ի դրությամբ հանդիսանում էր Օսմանյան կայսրության տարածքի մի մասը: (Հոդված 230)

Այս դրույթը չափազանց կարևոր էր հայ ժողովրդի համար այն իմաստով, որ Թուրքիան չէր կարող խուսափել Միջազգետքի անապատներում հայերի զանգվածային կոտորածներում մեղադրվող անձանց հանձնելուց այն պատրվակով, որ այդ տարածքները այլևս իրեն չեն պատկանում:

Դաշնակից տերություններն իրենց իրավունք էին վերապահում նշել այն դատարանը, որը պետք է դատեր մեղադրվող անձանց, իսկ օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ճանաչել այդ դատարանը: Ընդ որում, նշվում էր միջազգային հարաբերությունների պատմության մեջ առաջին անգամ հատուկ միջազգային քրեական դատարանի ստեղծման հնարավորության մասին: Այն դեպքում, եթե Ազգերի Լիգան պահանջվող ժամանակ կստեղծեր նշված գազանությունները դատապարտող իրավասու դատարան, դաշնակից տերությունները նշված մեղադրյալներին կփոխանցեին այդ դատարանին, իսկ օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ճանաչել այդ դատարանը²¹:

Սևրի պայմանագրի 226 և 230 հոդվածները ուղղակի կապ ունեն 1915թ. մայիսի 24-ի դաշնակից տերությունների համատեղ հայտարարության հետ և, ըստ էության, այս հոդվածները հանդիսանում են այդ հայտարարության տրամաբանական հետևանքը, քանզի դաշնակիցները դեռ այն ժամանակ խոստացել էին պատասխանատվության կանչել հայերի զանգվածային սպանությունների մեջ մեղադրվողներին: Մյուս կողմից Սևրի պայմանագրի 226 և 230 հոդվածները, իրենց արձագանքն ու արտացոլումն են գտել ՄԱԿ-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի» 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի դրույթներում՝ կապված այս ծանր

²¹ Барсегов Ю. Турецкая доктрина международного права на службе политики геноцида (о концепции члена «комиссии примирения» Гюндюз Актана), М., 2000, с. 32-33.

հանցագործության մեջ մեղադրվող անձանց հանձնելու և միջազգային տրիբունալ ստեղծելու գաղափարների հետ: Այս նկատառումները պարզորոշ ցույց են տալիս միջազգային իրավունքի մեջ այս հարցի աստիճանական զարգացումը, որն արդեն լիարժեք վեր էր ածվում միջազգային սովորությանին իրավունքի նորմի: Ցավոք այն ժամանակ Ազգերի Լիգան այդպես էլ չստեղծեց իրավասու դատարան՝ դատելու համար այդ ոճրագործությունների մեջ մեղադրվող անձանց²²:

Թուրքերը մշտապես վիճարկել են Սևրի պայմանագրի ուժի մեջ լինելը տարբեր հանգամանքներով՝ վավերացված չլինելով, Կարսի պայմանագրով ուժը կորցնելով, Լոզանի պայմանագրով փոխարինվելով և այլն: Սակայն նշված փաստարկները միջազգային իրավունքի տեսակետից անհիմն են և փաստորեն չեն ստվերում Սևրի պայմանագրի ուժի մեջ լինելու հանգամանքը գոնե Հայաստանի համար: Այժմ անդրադառնանք թվարկված փաստարկների քննությանը:

Սևրի պայմանագիրը ստորագրվեց այն ժամանակ, երբ Օսմանյան կառավարությունը վերջին շնչում էր, և երբ քեմալականությունը վերածվում էր քաղաքական և ռազմական աճող ուժի, ուստի դաշնագիրը չվավերացվեց ստորագրող կողմերի և նաև Թուրքիայի կողմից²³: Սակայն դաշնագիրը չվավերացնելը ամբողջությամբ զերծ չի պահում ստորագրողներին իրենց ստանձնած իրավական պարտավորություններից, մանավանդ որ միջազգային իրավունքում ընդունված է, որ վավերացման մերժումը կարող է ունենալ իրավական հետևանքներ, եթե նման մերժումը վնաս է հասցնում կողմերից մեկին²⁴: Տվյալ դեպքում դրա չվավերացնելը վնաս հասցրեց պայմանագրի կողմ հանդիսացող Հայաստանին:

Միջազգային իրավունքի պրակտիկայում որևէ պայմանագրի լռելյայն վավերացումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ դաշնագիրը վավերացնելուց առաջ մասամբ կամ ամբողջությամբ դրա դրույթները գործածության մեջ են դրվում պայմանավորվող պետությունների կամ պետության հավանությամբ կամ արտոնմամբ: Սևրի դաշնագիրը մասամբ գործածվեց այն ստորագրողների կողմից՝ արաբական հողերի Օսմանյան կայսրությունից անջատելու առումով, ինչը նախատեսված էր դաշնագրով, փաստորեն դա գործադրվեց, վավերացրած չլինելով և հաջորդ դաշնագրից՝ Լոզանի ստորագրումից առաջ²⁵:

²² ἰ»ñÝáÝ Æ., ²Ýá³íÁ»ÉÇάóÃÕάóÝ, ίñ»Á " ÁËĩάóÕ, չԳ11:

²³ ÛάóÕÝ ï»ÕάóÕ:

²⁴ ÁáñÇİÛ³Ý Բ. Թ³Ûİ³İ³Ý Ñ³ñóÁ " ÛÇԳ³½.³ÛԳÝ ùñչ ÝնÁ, ä»ÕñάóÃ, 1976, չԳ 85:

²⁵ ÛάóÕÝ ï»ÕάóÕ, չԳ 132:

Պայմանագիրը չվավերացված վիճակում գործածության մեջ մտնելու նախադեպեր միջազգային իրավունքում նույնպես կան: 1935թ. Ֆրանսիան և Իտալիան պայմանագիր էին ստորագրել աֆրիկյան որոշ շահերի առնչությամբ: Երեք տարի հետո Իտալիան անվավեր ճանաչեց պայմանագիրը՝ վավերացված չլինելու պատճառաբանությամբ (պայմանագրի մեջ ֆիքսված էր այն դրույթը, որ այն գործածության մեջ կմտնի վավերացումների փոխանակումից հետո միայն): Ֆրանսիան պատասխանեց, որ թեև չվավերացված, բայց պայմանագիրը մասնակի գործադրվել է Ֆրանսիայի կողմից և ընդգծվում էին բարի կամքից բխող պարտավորությունները²⁶:

Միջազգային իրավունքում կա այն նախնական մոտեցումը, որ վավերացումը օրինականորեն չի կարելի մերժել, բացի այն դեպքերից, երբ պայմանագիրը ստորագրող ներկայացուցիչները անցնում են իրենց իրավասության սահմանները, կամ խախտում են իրենց տրված գաղտնի ցուցումները²⁷: Սևրի պայմանագրի դեպքում Թուրքիայի կողմից այն ստորագրողները լիազորված են եղել դա անելու սուլթանի կողմից: 1920թ. հուլիսի 22-ին Կոստանդնուպոլսում սուլթանի խորհուրդը լրիվ կազմով քվեարկեց խաղաղության պայմանագիրը ստորագրելու օգտին և օգոստոսի 10-ին Թուրքիան պաշտոնապես ստորագրեց Սևրի պայմանագիրը²⁸:

Միջազգային պայմանագրերի մասին 1969թ. Վիեննայի կոնվենցիան պայմանագիրը ստորագրողների վրա դնում է այն պարտավորությունը, որ վնասակար որևէ քայլ չձեռնարկեն պայմանագրի բովանդակության հանդեպ, ստորագրումից հետո և վավերացումից առաջ²⁹:

Սակայն նման վնասակար քայլեր ստորագրողները ձեռնարկեցին: Առաջին հերթին 1921թ. փետրվարին և հոկտեմբերին Ֆրանսիայի և Իտալիայի հետ կնքած տարբեր համաձայնագրերը և հետագայում 1923թ. Թուրքիայի հետ Լոզանի պայմանագրի կնքումը (բացառությամբ Հայաստանի) Սևրի դաշնագրի դրույթները ձախողելու քայլեր էին և խախտում էին միջազգային իրավունքը³⁰:

Թուրքիայի կողմից Սևրի պայմանագրի «բովանդակության հանդեպ ձեռնարկված վնասակար քայլ» պետք է համարել ինչպես 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի անօրինական գործարքի, այնպես էլ դրա կցորդ-փաստաթուղթ հանդիսացող հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի կնքումը: Եթե թուրքերը վստահ լինեին

²⁶ ՄáóՄÝ ì»ŌáóՄ, չգ 134:

²⁷ ՄáóՄÝ ì»ŌáóՄ, չգ 85:

²⁸ Барсегов Ю. Геноцид армян-преступление по международному праву, с.184.

²⁹ ÁáñÇİŪ³Ý Բ. Թ³Մİ³İ³Ý Ñ³ñóÁ ~ ÛÇգ³½.³ՄÇÝ ùñչ ÝնÁ, չգ 86:

³⁰ ÁáñÇİŪ³Ý Բ. Թ³Մİ³İ³Ý Ñ³ñóÁ ~ ÛÇգ³½.³ՄÇÝ ùñչ ÝնÁ, չգ 87:

2. Սևրի պայմանագրի մեջ նախատեսված չէ փոփոխություն կամ հավելում կատարելու հնարավորություն կամ հողված:

3. Սևրի պայմանագիրը փոխելու, կամ այն նորով փոխարինելու որևէ առաջարկ ստորագրող պետությունների կողմից հրապարակված չէ: Միջազգային իրավունքի հանրահայտ և հաստատված կանոն է, որ պայմանագիրը ստորագրող պետությունները իրավունք ունեն մասնակցելու նրա փոփոխության ուղղությամբ տարվող բանակցություններին և մշակմանը:

4. Հայաստանը, իբրև Սևրի պայմանագիրը ստորագրող պետություններից մեկը նույնիսկ հրավիրված չէր մասնակցելու Լոզանի պայմանագրին (հայերին թույլատրված էր խոսել միայն ենթահանձնախմբի առջև): Մյուս կողմից, ԱՄՆ-ը, որոնք չէին ստորագրել Սևրը, ներկա էին Լոզանի պայմանագրի ստորագրմանը: Այսպիսով երկու պայմանագրերին ծնունդ տվող կողմերը նույնը չեն: Դաշնագրի կողմ եղած պետություններից մեկը հետագայում առանձին նույնպես իրավունք ունի դառնալու փոփոխված պայմանագրի կողմ, ուստի գոնե հետո Հայաստանը պարտադիր պետք է հրավիրվեր Լոզանի պայմանագրին միանալու իբրև նախորդ պայմանագրի մասնակից: Այդ խորհրդածողովին Հայաստանի բացակայությունը հիմք է տալիս խոսելու նոր պայմանագրի՝ Լոզանի պայմանագրի մասին: Քանի որ փոխվել են պայմանագրի կողմերը, սուբյեկտները, ուստի և Լոզանի պայմանագիրը անգոր է և անվավատ է այն չափով, որ չափով որ կարող է փոփոխության ենթարկել Սևրի պայմանագրում ամրագրված Հայաստանի իրավունքները:

5. Բազմակողմանի պայմանագրի երկու կամ ավելի կողմերը կարող են համաձայնության գալ փոխելու համաձայնագիրը միայն իրենց միջև, եթե խնդրո առարկա փոփոխությունը չի խախտում ստորագրող մյուս կողմերի պայմանագրով նախատեսված իրավունքները: Լոզանի պայմանագիրը ամբողջությամբ անտեսեց Սևրի պայմանագրով հաստատված Հայաստանի իրավունքները³⁴:

Վերընշվածից պարզ երևում է, որ Լոզանի պայմանագիրը չի կարող փոխարինել Սևրի պայմանագիրը գոնե Հայաստանի մասով: Ավելին, Լոզանի պայմանագրին անուղղակիորեն հաստատում է Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերող հողվածները: Ինչպես հայտնի է, Լոզանի պայմանագրով կարգավորվել են թուրք-բուլղարական, թուրք-հունական և թուրք-սիրիական սահմանները, ըստ այդմ՝ հստակեցնելով Թուրքիային պատկանող տարածքները միայն երկրի այդ հատվածներում: Միննույն ժամանակ Լոզանի պայմանագրի 16-րդ հողվածի

³⁴ ÁáñÇiÜ³Ý Բ. Ծ³Üi³i³Ý Ñ³ñóÁ " ÛÇç³½.³ÜÇÝ ùñչÝնÁ, չգ 88-89:

համաձայն «Թուրքիան հրաժարվում է բոլոր այն տարածքների ու կղզիների տիրտղուսից և դրանց նկատմամբ իր բոլոր իրավունքներից, որով գտնվում են սույն պայմանագրով գծած սահմաններից դուրս, բացառությամբ նրանց, որոնց նկատմամբ սույն պայմանագրով ճանաչվել են նրա ինքնիշխանությունը, այս տարածքների և կղզիների ապագան լուծել են կամ կլուծեն շահագրգիռ կողմերը»³⁵: Թուրքիայի արևելյան սահմանների, այսինքն՝ Խորհրդային Հայաստանի հետ սահմանի չհստակեցումը Լոզանի պայմանագրում անուղղակիորեն նշանակում է, որ Թուրքիան մեկ անգամ ևս վերահաստատել է վիլսոնյան Հայաստանից իր հրաժարումը³⁶: Անշուշտ, այս դատողությանը կարելի է հակադարձել նրանով, թե հայ-թուրքական սահմանը հստակեցվել էր երկու տարի առաջ Կարսի պայմանագրով, սակայն բանն այն է, որ մինչ այդ բազմակողմ միջազգային պայմանագրով, ինչպիսին հանդիսանում էր Սևրի պայմանագիրը և միջազգային արբիտրաժի որոշմամբ արդեն իսկ միջազգայնորեն որոշվել ու ճանաչվել էր հայ-թուրքական սահմանը, իսկ միջազգային իրավունքի նորմերի խախտմամբ պարտադրաբար ստորագրված Կարսի երկկողմ պայմանագիրը ի զորու չէր փոխարինել նախկինում կայացված որոշումը: Ուստի, Լոզանի պայմանագրում այս հարցի բաց լինելը անուղղակիորեն վերահաստատում է Սևրի պայմանագրի և իրավարար վճռի ուժի մեջ մնալու հանգամանքը:

Թուրքիան տասնամյակներ շարունակ խախտել է անգամ իր համար շատ ձեռնտու Լոզանի պայմանագրի կետերը, կապված ազգային փոքրամասնությունների, ներառյալ հայերի իրավունքների պաշտպանության հետ, որոնք տեղ էին գտել Լոզանի պայմանագրի 38-44-րդ հոդվածներում: Թուրքիային կարելի է պատասխանատվության կանչել Լոզանի պայմանագրի դրույթները խախտելու համար՝ 1929-1930թթ. կոտորածները վերապրած 30-40000 հայերի հարկադիր արտաքսումը դեպի Սիրիա իրագործելու և Թուրքիայի հայկական համայնքի կալվածքները ապօրինի բռնագրավումից օրինական տերերին վերադարձնելու առումով³⁷: Այս հարցում իրենց մեղավորությունն ունեն Լոզանի պայմանագիրը ստորագրած մյուս պետությունները, որոնք թույլ տվեցին Թուրքիային խախտել իր վրա դրված պարտավորությունները: Լոզանի պայմանագրում դաշնակիցների կողմից մերժվեց անգամ հայերի համար ազգային օջախ ստեղծելու գաղափարը, ինչը ազգերի ինքնորոշման սկզբունքի խախտում է:

³⁵ äáÙ³Ý 2. Ð³Ùáó ä³Ñ³ÝÇ³ÇñáóÃÙ³Ý ÑÇÙÝ³ËÝ¹ÇñÝ»ñÝ áó Ñ»é³Ýí³ñÝ»ñÁ, չֆ 72:

³⁶ ÛáóÙÝ í»ÕáóÙ:

³⁷ ÁáñÇİÙ³Ý Բ. Ð³Ùí³í³Ý Ñ³ñóÁ " ÛÇֆ³½.³ÙÇÝ úñչÝùÁ, չֆ 138:

Իսկ ընդհանրապես, եթե հստակ մտադրություն կար Լոզանի պայմանագրով փոխարինել Սևրի դաշնագիրը, ապա Լոզանի պայմանագրի ստորագրմանը անպայման պետք է հրավիրվեր Հայաստանի կողմից լիազորված անձ, ինչը չարվեց, իսկ այս պարագայում Լոզանի պայմանագիրը համենայն դեպս Հայաստանի համար իրավական ուժ չունի, և Հայաստանը ոչ միայն պարտավոր չէ ճանաչել Լոզանի պայմանագրի դրույթները, այլև լիարժեք իրավունք ունի պահանջել Սևրի պայմանագրով իր իրավունքներին վերաբերող հողվածների կատարումը, քանզի ներկայիս Հայաստանի, որպես Խորհրդային և Առաջին հանրապետությունների իրավահաջորդի համար ուժի մեջ է համարվում Սևրի դաշնագիրը:

Սևրի պայմանագրի ուժի մեջ լինելու հանգամանքը մտահոգիչ է թուրքերի համար նաև մեր օրերում, երբ սկզբում Հայաստանի կողմից Թուրքիայի տարածքային ամբողջականության ճանաչումը և, հետևաբար, Սևրի պայմանագրից հրաժարումը հայ-թուրքական հարաբերությունների հաստատման թուրքերի կողմից առաջ քաշվող գլխավոր նախապայմաններից մեկն էր, իսկ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար հայտնի արձանագրություններում ընդգծվում է Կարսի պայմանագրի ճանաչումը, ենթատեքստում ունենալով Սևրի պայմանագիրը չեզոքացնելու ձգտումը:

Այսպիսով, Սևրի պայմանագիրը, անկախ վավերացված լինելու հանգամանքից, մասնակիորեն գործադրված, այսինքն՝ ուժի մեջ մտած պայմանագիր է: Օսմանյան կայսրության տրոհումը և նրա նախկին տարածքների վրա նոր պետությունների ստեղծումը կատարվել է Սևրի պայմանագրի հողվածների հիման վրա, ինչը ակնհայտորեն ընդգծում է այս պայմանագրի վավերականությունը: Ցավոք Հայաստանին և հայ ժողովրդի մասով Սևրի պայմանագիրը մնում է չգործադրված:

Ներկայումս, միջազգային իրավունքը Հայաստանի Հանրապետությանը, իբրև Խորհրդային Հայաստանի և Հայաստանի առաջին Հանրապետության իրավահաջորդ պետության, որին 1920թ. օգոստոսի 10-ին Սևրի պայմանագրով և նոյեմբերի 22-ին իրավարար վճռով օժտել են որոշակի իրավունքներով, հնարավորություններ է ընձեռում հիմնավոր պահանջներ ներկայացնել Օսմանյան կայսրության իրավահաջորդ հանդիսացող ժամանակակից Թուրքիային և պատասխանատվության կանչել վերջինիս, հասնելով Հայոց ցեղասպանության հետևանքների վերացմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սևրի պայմանագիրը 90 տարի անց էլ, անկախ վավերացված լինելու հանգամանքից, մասնակիորեն գործադրված, այսինքն՝ ուժի մեջ մտած պայմանագիր է: Օսմանյան կայսրության տրոհումը և նրա նախկին տարածքների վրա նոր պետությունների ստեղծումը կատարվել է Սևրի պայմանագրի հոդվածների հիման վրա, ինչը ապացուցում է տվյալ պայմանագրի վավերականությունը:

Հայաստանի և հայ ժողովրդի մասով Սևրի պայմանագիրը դեռևս մնում է չգործադրված: Ներկայումս միջազգային իրավունքը Հայաստանի Հանրապետությանը, իբրև Խորհրդային Հայաստանի և Հայաստանի առաջին Հանրապետության իրավահաջորդ պետության, հնարավորություն է տալիս թե՛ Սևրի պայմանագրի, և թե՛ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի հայ-թուրքական սահմանը հստակեցնող իրավարար վճռի հիման վրա հիմնավոր պահանջներ ներկայացնել Օսմանյան կայսրության իրավահաջորդ հանդիսացող ժամանակակից Թուրքիային և պատասխանատվության կանչել վերջինիս, հասնելով Հայոց ցեղասպանության հետևանքների լիարժեք վերացմանը: